State of California — Health and Human Services

Department of Health Care Services

P.O. Box 989009, West Sacramento, CA 95798-9850

8-

JOHN SAMPLE
1234 SAMPLE STREET
ADDRESS 2
ANYTOWN CA 90000

XX/XX/XXXX

Կարևոր վերջնական հիշեցում

Հետևյալ օրվանից փոխվում է այն ձևը, որով Դուք ստանում եք «Medi-Cal»-ի Ձեր նպաստները. [MM/DD/YYYY]

Որպեսզի Դուք «Medi-Cal»-ի ծառայություններ ստանաք, Դուք **պետք** է անդամագրվեք «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման որևէ առողջապահական ծրագրի: Այս փոփոխության նպատակը «Medi-Cal»-ի Ձեր ծառայություններն ի մի հավաքելն է:

Սա ՎԵՐՋԻՆ հիշեցում-նամակն է «Medi-Cal»-ի ծրագիր ընտրելիս Ձեր տրամադրության տակ եղած տարբերակների մասին:

Եթե Դուք «Medi-Cal»-ի մեկ այլ ծրագիր չընտրեք, Ձեր ապահովագրությունը ստորև նշված ծրագրում.
[Health Plan Name]
ուժի մեջ կմտնի հետևյալ օրվանից. MM/DD/YYYY : Մենք ընտրել ենք այդ ծրագիրը ելնելով նախկինում Ձեր ստացած ծառայություններից և Ձեր առողջապահական կարիքներից, բայց Դուք դեռ իրավունք ունեք «Medi-Cal»-ի մեկ այլ ծրագիր ընտրելու:

Եթե Դուք «Medicare» ունեք, ապա այս փոփոխությունը չի ազդում «Medicare»-ի Ձեր ապահովագրության կամ «Medicare»-ի Ձեր բժշկին այցելելու հնարավորության վրա:

Այս փոփոխությունն ինչպե՞ս կազդի ինձ վրա:

- «Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը կհամակարգի «Medi-Cal»-ի կողմից վճարվող Ձեր բոլոր ծառայությունները, այդ թվում՝ «Long Term Services and Support»-ը:
- «Medicare»-ի Ձեր ծառայությունները և սպասարկողները ՉԵՆ փոխվի:
- «Medi-Cal»-ի Ձեր ծառայությունները և նպաստները ՉԵՆ փոխվի:
- «Medi-Cal»-ի Ձեր իրավասությունը որևէ փոփոխություն ՉԻ կրում և լրացուցիչ ծախս չի պահանջում Ձեզանից:

Եթե Դուք միայն «Medi-Cal» ունեք, ապա պետք է դիմել «Medi-Cal»-ի Ձեր ծրագրին և պարզել, թե արդյոք Ձեր սպասարկողներն աշխատակցում են այդ ծրագրին:

Ի՞նչ են «Medi-Cal»-ի «Long Term Services and Supports»-ները:

- **«In-Home Supportive Services»-ը (IHSS)** անձնական խնամքի ծառայություններ են այն անձանց համար, ում օգնություն է հարկավոր սեփական տանն ապահով ապրելու համար: Եթե այժմ Դուք IHSS եք ստանում, Դուք ստիպված չեք փոխել IHSS-ի Ձեր սպասարկողներին և կարող եք առաջվա նման վարձել, հեռացնել ու կառավարել Ձեր սպասարկողներին:
- **«Community-Based Adult Services»-ը (CBAS)** որոշ քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց խնամք, բուժում, ժամանց և սնունդ տրամադրող կենտրոններում գործող ցերեկային ծառայություններ են:
- **«Multipurpose Senior Services Program»-ը (MSSP)** սոցիալական և բուժսպասարկումը համակարգող ծառայություններ է տրամադրում՝ 65 տարեկան կամ ավելի մեծ անձանց համար: Եթե Դուք ներկայումս MSSP եք ստանում, ապա «Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը կհամագործակցի MSSP-ի Ձեր սպասարկողի հետ՝ Ձեր խնամքն ավելի լավ համակարգելու համար, և Դուք ստիպված չեք փոխել MSSP-ի Ձեր սպասարկողին:
- **Ծերանոցային խնամք:** Եթե Դուք ծերանոցում եք գտնվում, ապա Ձեր առողջապահական ծրագիրը կհամագործակցի Ձեր բժշկի և ծերանոցի հետ՝ Ձեր խնամքն ավելի լավ կազմակերպելու համար: Եթե այժմ Դուք ծերանոցում եք գտնվում, Դուք ստիպված չեք փոխել Ձեր ծերանոցը:

Եթե այժմ Դուք այդ ծառայությունները չեք ստանում, «Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը կարող է հետագայում օգնել Ձեզ դրանք ստանալու հարցում, եթե Դուք դրանց կարիքն ունենաք:

Ես ի՞նչ ընտրություն ունեմ

- **Մնալ «Medi-Cal»-ի այն ծրագրում, որը մենք ընտրել ենք Ձեզ համար:** Եթե Դուք որոշեք, որ ստորև նշված ծրագիրը
  [Health Plan Name]
  համապատասխանում է Ձեր պահանջներին, ապա ոչինչ անելու կարիք չկա: Հետևյալ օրվանից Դուք կընդգրկվեք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում. MM/DD/YYYY:
- **«Medi-Cal»-ի մեկ այլ ծրագիր ընտրել:** Կարող եք ուսումնասիրել Ձեր շրջանում գործող ծրագրերը՝ պարզելու համար, թե արդյոք դրանցից որևէ մեկն ավելի լավ է համապատասխանում Ձեր պահանջներին: Մենք Ձեզ ընտրության փաթեթ ենք ուղարկել, որը տեղեկություններ է պարունակում այն ծրագրերի մասին, որոնք Դուք կարող եք ընտրել:
    - Ընտրություն կատարելու համար կարող եք զանգահարել «Health Care Options»՝ 1-844-580-7272 հեռախոսահամարով, կամ լրացնել, ստորագրել և վերադարձնել «Medi-Cal»-ի Առողջապահական ծրագրի ընտրության թերթիկը՝ մինչև հետևյալ ամսաթիվը. MM/DD/YYYY: Եթե Ձեզ պետք է ընտրության փաթեթի ևս մեկ օրինակ, զանգահարեք «Health Care Options»:

Օգնության կամ լրացուցիչ տեղեկությունների համար

Եթե Դուք «Medicare» ունեք, խնդրում ենք զանգահարել **«California Health Insurance Counseling & Advocacy Program» (HICAP)՝ 1-800-434-0222 (TTY՝ 711)** հեռախոսահամարով:

Եթե հարցեր ունեք «Medicare»-ի վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ օրը 24 ժամ՝ շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048:

Եթե ցանկանում եք «Medi-Cal»-ի մեկ այլ ծրագիր ընտրել և/կամ այս նամակը ստանալ մեկ այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով, օրինակ՝ խոշորատառ, ձայնագրված կամ Braille-ի գրատիպով, խնդրում ենք զանգահարել «Health Care Options»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 8-ից 17-ը՝ 1-844-580-7272 կամ TTY՝ 1-800-430-7077, հեռախոսահամարով: